Հավելված
«Մասնագիտական կրթության որակի ապահովման
ազգային կենտրոն» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի
2021թ. հոկտեմբերի 29-ի թիվ 6-Լ որոշման

«ՄԱՍՆԱԳՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՆԱԽԱԲԱՆ

1. «Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ) ստեղծվել է 2008 թվականին ՀՀ կառավարության 1486-Ն որոշմամբ՝ ի կատարում Բոլոնիայի համակարգին Հայաստանի Հանրապետության միացման արդյունքում ստեղծված համաձայնագրերի ներպետական իրականացման պահանջների:
2. ՀՀ կառավարության 2008 թվականի 1486-Ն որոշմամբ հաստատված ՈԱԱԿ կանոնադրության 6-րդ կետի 6)-րդ ենթակետով սահմանվում է, որ ՈԱԱԿ-ին վերապահված է իրականացնելու մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) և դրանց ծրագրերի մշտադիտարկումներ:
3. Սույն քաղաքականությունը և ընթացակարգը սահմանվում է կանոնադրական նպատակից բխող իրավահարաբերությունների կարգավորման համար:
4. Սույն քաղաքականությամբ և ընթացակարգով սահմանվում են քաղաքականության սկզբունքները, նպատակը, խնդիրները, մշտադիտարկման տեսակները և անձանց շրջանակը, մշտադիտարկումների կազմակերպման և անցկացման կարգը, առանձնահատկությունները:

1. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Մշտադիտարկումների նպատակն է նպաստել մասնագիտական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ՄՈՒՀ) որակի ապահովման շարունակական բարելավմանը:
6. Մշտադիտարկման խնդիրներն են.
   1) հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-երում ընթացիկ խնդիրների բացահատումը, դրանց վերացման և որակի բարելավման համար խորհրդատվությունների տրամադրումը,
   2) որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ընթացքում առաջացած խնդիրների ուսումնասիրությունը և խորհրդատվությունների տրամադրումը:
   3) մշտադիտարկումների արդյունքների հիման վրա՝ Հավատարմագրման հանձնաժողովին և/ կամ կրթության, գիտության մշակույթի և սպորտի առավարման բնագավառի լիազոր մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին) տեղեկատվություն կամ առաջարկություններ տրամադրելը:

7. Մշտադիտարկումներ իրականացնելիս ՈԱԱԿ-ն առաջնորդվում է օրինականության, անընդհատության, թափանցիկության, հավասարության, արդարության, օբյեկտիվության, էթիկայի նորմերի պահպանության, պարբերականության սկզբունքների հիման վրա:

2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Մշտադիտարկումներն իրականացվում են երկու տեսակով՝ ինստիտուցիոնալ և ծրագրային, անկախ հաստատության կազմակերպաիրավական և սեփականության ձևից, գերատեսչական ենթակայությունից, հավատարմագրվածի կարգավիճակից:
9. Մշտադիտարկումներն իրականացվում են ՄՈՒՀ-եր այցերի (առցանց, առկա կամ համակցված) միջոցով, որոնք նախապես պլանավորվում և քանակական ցուցիչներով հաստատվում են ՈԱԱԿ-ի կողմից:
10. Յուրաքանչյուր տարի ՈԱԱԿ-ը լիազոր մարմին է ուղարկում 2 տարվա միջնաժամկետ ծախսային ծրագրով ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները, որտեղ առկա են մշտադիտարկումները՝ ըստ քանակների և, տարեկան կտրվածքով՝ ըստ եռամսյակային քանակների:
11. Սույն քաղաքականության և ընթացակարգի 11-րդ կետով սահմանված գործողությունից հետո, ՈԱԱԿ-ը կազմում է մշտադիտարկումների ժամանակացույցերը՝ ըստ մշտադիտարկվող ՄՈՒՀ-երի և, այցից առնվազն երկու շաբաթ առաջ համաձայնեցնում ՄՈՒՀ-ի հետ: Համաձայնեցված ժամանակացույցում սահմանվում է մշտադիտարկման օրակարգը, որտեղ նշվում են այցի օրերը, անցկացվող հանդիպումների թիրախային խմբերը և հանդիպման ժամերը, վայրը:
12. Մշտադիտարկումներ իրականացնելու համար ՈԱԱԿ-ում ձևավորվում է մշտադիտարկող խումբ, որի անդամներ են հիմնադրամի աշխատակիցները, իսկ, անհրաժեշտության դեպքում, խմբում կարող է ընդգրկվել մինչև երկու փորձագետ: Մշտադիտարկման խումբն ունի համակարգող, որը ՈԱԱԿ-ի աշխատակից է:
13. ՄՈՒՀ-ի ղեկավարության առաջարկով օրակարգում կարող են որոշ փոփոխություններ մտցվել, եթե դրանք չեն հակասում մշտադիտարկման նպատակի իրագործմանը:
14. Մշտադիտարկման խմբի այցը ՄՈՒՀ կարող է տևել մինչև երկու օր՝ կախված ՄՈՒՀ-ի ուսանողների քանակից, իրականացվող ծրագրերից, ռեսուրսներից:
15. ՈԱԱԿ-ը կարող է իր կայքում հրապարակումներ անել ՄՈՒՀ-ում անցկացվող մշտադիտարկումների վերաբերյալ:
16. Մշտադիտարկման այցի ավարտին՝ ամփոփիչ հանդիպման ժամանակ, մշտադիտարկող խումբը՝ ղեկավարի միջոցով, ուսումնական հաստատության ղեկավար կազմի հետ բանավոր ներկայացնում է մշտադիտարկման արդյունքները, ՄՈՒՀ-ի վիճակը, առկա բացթողումները, խնդիրները, խորհրդատվությունները բարելավումների ուղղությամբ:
17. Մշտադիտարկման ավարտին կազմվում է զեկույց, որն անհրաժեշտության դեպքում և պահանջով ներկայացվում է ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովին:

3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՄՈՒՀ-ԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Հավատարմագրված ՄՈՒՀ-երում հերթական մշտադիտարկում իրականացնելու համար ձևավորվում է 2-5 անձից բաղկացած մշտադիտարկող խումբ՝ ՈԱԱԿ-ի աշխատակիցներից և (կամ) ՈԱԱԿ-ի փորձագետների շտեմարանի փորձագետներից, ինչպես նաև հավատարմագրման հանձնաժողովի անդամներից:
19. Մշտադիտարկման խումբը հավատարմագրված ՄՈՒՀ-ում համակողմանի ուսումնասիրում է ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում մշակված և հաստատված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհի ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը, հավաքագրում է արդյունքների վերաբերյալ տեղեկություններ:
20. Ծրագրից բացի, մշտադիտարկման ընթացքը առավել արդյունավետ կազմակերպելու համար խումբն կարող է կատարել ռեսուրսների ուսումնասիրություն, իրականացնել դասալսումներ, մասնակցել քննությունների ընթացքին:
21. Ինստիտուցիոնալ հավատարմագրված ՄՈՒՀ-ում մշտադիտարկող խումբն իրավունք ունի իրականացնել նաև ծրագրային մշտադիտարկում:
22. Ծրագրային մշտադիտարկումը կարող է իրականացվել ինչպես առանձին ժամանակացույցով, այնպես էլ ինստիտուցիոնալ մշտադիտարկման հետ միաժամանակ:
23. Մշտադիտարկման ավարտից ոչ ուշ քան 2 շաբաթվա ընթացքում մշտադիտարկող խումբը կազմում է ինստիտուցիոնալ մշտադիտարկման զեկույց՝ հիմք ընդունելով Ծրագրի կատարման արդյունքները, հավաքված տվյալները, թիրախային խմբերի հետ հանդիպումները, եթե կատարվել են նաև ծրագրային մշտադիտարկումներ, ապա դրանց արդյունքները: Եթե ծրագրային մշտադիտարկումներն իրականացվել են առանձին, ապա կազմվում է ծրագրային մշտադիտարկման զեկույց մշտադիտարկման ավարտից ոչ ուշ քան 2 շաբաթվա ընթացքում:

4. ՉՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՄՈՒՀ-ԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24. Չհավատարմագրված ՄՈՒՀ-ի մշտադիտարկման խումբը բաղկացած է 1-3 անդամից՝ ՈԱԱԿ աշխատակիցներից, անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրվել նաև ոլորտի մեկ փորձագետ:
25. Մշտադիտարկող խումբը ՄՈՒՀ-ում համակողմանի ուսումնասիրում է որակի ներքին ապահովման համակարգը:
26. Այցից առնվազն երկու շաբաթ առաջ մշտադիտարկող խումբը կազմում է մշտադիտարկման օրակարգը, որում նշվում է մշտադիտարկման օրերի քանակը, միջոցառումները, ՄՈՒՀ-ի տարբեր խմբերի հետ հանդիպումների ժամերը և վայրը:
27. Մշտադիտարկման օրակարգը համաձայնեցվում է ՄՈՒՀ-ի ղեկավարության հետ՝ այցից առնվազն մեկ շաբաթ առաջ:

5. ՄՇՏԱԴԻՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

28. Մշտադիտարկման ամփոփ վերլուծությունը տարեկան կամ մի քանի տարիների կտրվածքով, ուղարկվում է Հավատարմագրման հանձնաժողով՝ ըստ անհրաժեշտության և պահանջի:
29. Մշտադիտարկումների արդյունքներն օգնում են ՄՈՒՀ-ին ուսումնագիտական գործընթացներին, կրում են խորհրդատվական-բարելավող բնույթ, հնարավորություն են տալիս գնահատել թերությունների վերացման պլանի իրականացման ընթացքը, հավատարմագրումից հետո առաջացած խնդիրների վերացումը, ծրագերի բարելավմանն ուղղված քայլերը և նախապատրաստվել հաջորդ հավատարմագրմանը:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

30. Մշտադիտարկման ընթացքում խմբի անդամներին հասանելի դարձած տեղեկատվության նկատմամբ կիրառվում է ստացված և ձեռք բերված տեղեկությունների պահպանության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
31. Սույն քաղաքականությունը և ընթացակարգն ուժի մեջ է մտնում ՈԱԱԿ-Ի Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվելուց հետո և ՈԱԱԿ-ի պաշտոնական կայքում հրապարակվելու հաջորդ օրը:
32. Սույն կարգի անբաժանելի մասերն են համարվում կարգում կատարվող լրացումները, փոփոխությունները, հավելվածները: